Մշակական ու աշնան յետին ամիսն է . օրերը խիստ կարճ. օդը յաճախ միգապատ ու գետինը եղեմնոտ կ'ըլլայ . ցուրտի ու սառոյցի պատճառով հերկը կըդադրի ու ամսոյս վերջը և մշակը հանգիստ ընելու կը պատրաստուի : Պէտք է որ ամսոյս մէջ ցորենը բոլորովին կալված ըլլայ : Շէնքի համար պէտք եղած ատաղձը , վառելու փայտը կտրելու , արտերուն մէջի ջրանցքներն ու փոսերը մաքրելու , ուռիներն ու ցանկապատները կտրել շտկելու է :

Ատեն է չորմիսն ու երեշիկը շինելու . հնդկահաւները , սագերն ու բադերը ի վաճառ դրկելու և ձմռան ամէն պաշարը հոգալու :

Կանաչեղէնը քիչ կ'ըլլայ . քանի մը տեսակ աղցան ու նմանները շատ անքոյթ տեղեր տնկվելով առաջ կուգան :

Ածուներու և արտերու մէջ տնկված ամէն բնդեղէն ու արմտիք պէտք է որ հողի հետ խառնված չոր տերևով , խոտով կամ յարդով լաւ ծածկված ըլլան ցուրտէն պատսպարված :

## ՄՇԱԿԱԿԱՆ
### Ձիւներ ամսոյն

—

Այս ամսոյն հետ բուն ձմեռը կ'ըսկսի . երկիրն իր ընթացքին մէջ ձմռան արևակայքը կը հասնի , այսինքն այն կէտը որ երկրիս արևին էն մօտ գտնված կէտն է , և ասոր համար Périhélie կը կոչվի : Ասկէ ետքը արևը կ'ըսկսի բարձրնալ , ցերէկն երկարիլ և գիշերը կարճընալ : Օդը սաստիկ ցուրտ ու ձիւնաբեր կ'ըլլայ : Հիւսիսային երկիրներու լեռներն ու դաշտերը ձիւնով կը ծածկվին :

Մշակը դաշտային աշխատութիւն չ'է կարող ընել սաստիկ օդով և խրճիթը կը քաշվի՝ հանգչելու և միանգամայն հողագործական գործիքները պատրաստելու համար , կանեփն ու վուշը գործելու, և իւղ հանելու : Ճարտար մշակ մը ձեռարհեստով ալ կ'զբաղի . կողով , կթոց , նստոց, աթոռակ , փայտմուճակ , և այլ. շինելով :

Պարտիզպանը ալ ջերմուկի մէջ կըպարապի . իսկ եթէ օդը ներէ , կրնայ դիւրաբոյս սերմեր ցանել հարաւի դէմ ընկնող պատերու տակ :

## ՄՇԱԿԱԿԱՆ
### Սառնէր ամսոյն

—

Օդը սաստիկ ցուրտ, սառնամանիքը խիստ ու երկիրը ձիւնապատ է այս ամսոյ մէջ. բայց եթէ օդը ներէ, ժիր մշակը առջին հերկը կուտայ այն հողերուն ուր պիտի սերմանէ գարի, վարսակ, գարնան ցորեն. և կ'ըսկսի աղբել ու պարարել նոյն գետինները. պտղատու ծառեր տնկել, ու նուաղեալներուն տակը փորել ու աղբել: Պարտիզպանը կ'ըսկսի ցանել հարաւի դէմ ընկնող պատերու տակ սամիթ, սոխ, սխտոր, կարոտն, հազար, շոմին, եղերդ, կոտէմ և ուրիշ կանխահաս բոյսեր: Կանգառին վրայ բանալու է ցերեկը, և գիշերը ծածկելու է. բունծերը լաւ քաղահան ընելու է,

Եթէ ցորենները խիստ առաջ գնացած են՝ տերեւներուն ծայրերը մանկաղով կտրելու կամ ոչխարներու ճարակել տալու է:

Մեղուի տկար փեթակներու վրայ հսկելու է, և եթէ պաշարնին ըսպառած է, անոնց անուշ հայթայթելու է:

## ՄՇԱԿԱԿԱՆ
### Մրրկէր ամսոյն

—

Բնական տարւոյ և ձմռան վերջին ամիսն է. արեւը կ'ըսկսի հորիզոնին վրայ բարձրանալ և գետինը քիչ մը տաքցնել: Սաստիկ հովեր ու մրրիկներ սառնամանիքը կը հալեցնեն ու գետնին երեսը կը չորցնեն: Քանի մը բոյսեր կ'ըսկսին ծլիլ ու ձմռան քանի մը գողտրիկ ծաղկանց հետ կ'երեւի պարկեշտ մանիշակը:

Պտղատու ծառեր տընկելու չ'է ալ. կորիզապտուղ ծառերը յօտելու և պատուաստելու է, որթերն ալ կրնան յօտվիլ ամսոյս վերջերը:

Պէտք է՝ գետնատանձ, գետնախընձոր, սխեռ, ոլոռ, լուբիա, պակլա, առւոյտ, նաև պարտէզի ծաղիկներ ցանել, ելակ տնկել, այգւոց և պարտէզներու ցանկապատ ծառատունկները գըրտել ու յարդարել:

Սագն ու Բադը և քանի մը տեսակ հաւեր թուխս կը նստին այս ամսոյ մէջ:

Միզօն և Ջիւներ ամսոց մէջ ծնած գառները մալելու ատենն է:

# ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ
# ՏԱՐԵԲԱՇԽԱԿԱՆ

—

Տարածութեան չափին պէս՝ ժամանակին չափն ալ ունի իւր կարևորութիւնը: Ժամանակ և տարածութիւն՝ անվախճանին գաղափարը տուող այս երկու համագոյակից բնական էութիւնքը՝ յորս յաւիտեան ընկղմեալ են համայն տիեզերք և ամենայն գործք մարդկան, պատմութեան երկու աչերն են ճշմարտապէս. մէկը ժամանակագրութեամբ կը լուսաւորէ զանի և միւսը տեղագրութեամբ: Ուստի ժամանակի և տարածութեան չափոց ճշդութեան հարկաւորութիւնն անժխտելի է յաչս իմաստասիրին և օգուտն անկշռելի մարդկային գործողութեանց մէջ ամէն ատեն և ամէն ուրեք:

Այս չափոց բարեկարգութիւնը՝ տիեզերական ըլլալու համար՝ չափելու առարկայից պէս՝ պէտք է որ բնական ըլլայ: Տարածութեան չափին ճշդութեան խնդիրը լուծեալ է բնական կերպով Ֆռանսացւոց հնարած մետր անուանեալ չափով, որոյ տասնորդական դրութեամբ բաժանմունքը ամէն փափաք կը յագեցնեն այս մասին: Իսկ ժամանակին չափոց բարեկարգութիւնը՝ որ թէպէտ Գրիգորեան տոմարով իւր ճշգրտութիւնը գտած է աստեղական հաշուոց մէջ՝ ամէն 4 տարին և ամէն 4 դարագլուխ մէյմը նահանջելով տարին, սակայն իւր բաժանմանց մէջ թերութիւններ թողած է ընդդէմ բնաւորութեան որոնք պէտք ունին ուղղուելու ըստ աստեղական դրութեան:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏՈՄԱՐ. — Այս տոմարը զոր այսօր արևմտեայք կը գործածեն, իւր ճշտութեամբն հանդերձ երկու մեծ թերութիւններ ունի. մէկը՝ յունվարէն սկսած տարեգլուխն է որ ծուռ է և որով ամէն ամսագլուխք խախտեալ են իրենց բնական տեղէն՝ աստեղական դրութեանց մէջ. երկրորդը՝ ամսոց անուններն են որք խառն ի խուռն, շփոթ և ամենևին անտեղի ու անյարմար են բանաւէր ու դիտող ազգի մը համար:

1. Տարեգլուխ. — Աստեղական կամ արեգակնային դրութեան մէջ՝ որ միակ ընդունելին է ժամանակին չափոց մէջ, բնականապէս 4 գլխաւոր կետ կայ, որոցմէ մէկէն կամ միւսէն կրնայ

սկսիլ տարին, որք են 4 եղանակաց սկիզբը, որոնք աստեղակամարին վրայ նշանակեալ իբր հաստատ կէտեր՝ ընդունուած են աստղաբաշխօրէն :

Տարակոյս չկայ որ այս կէտերէն գարնանային հաւասարակածի կէտն է որ բնական տարեգլուխ կրնայ ըլլալ, ով որ աչք ունի ու զգայուն և կը դիտէ ըզ բնութիւն, կը տեսնէ որ գարունն է տարւոյն առաւօտը, կը տեսնէ որ ծերացեալ տարին գարնան եղանակէն կ՚ըսկսի վերստին մանկանալ, բնութիւնը նորէն կ՚արթըննայ ու կենդանացնէ ամէն արարած, ժամանակաց և եղանակաց սկիզբը կը դառնայ և վերջապէս նորէն կ՚ըսկսէ տարին զիւր շրջանը :

Գարնանամուտէն սկսած այս բնական տարւոյն ամսագլուխները ըստ կարի ճիշտ կը պատասխանեն աստեղակամարի կենդանակերպից՝ որոց մէջէն անցնելով կը կատարէ արեւն իր տարեկան շրջանը, և որոց վրայ չափուած է տարւոյն բաժանումն ի 12 ամիս և ի 4 եղանակ :

Բնութեան ամանորեայ երևոյթները նկատողութեան չառնելով՝ միւս որ

եղանակաց ալ սկիզբէն սկսվի տարին, ամսագլուխները դարձեալ կը պատասխանեն կենդանակերպ աստեղատանց :

Հին ազգերը՝ աւելի դիտող բնութեան և աւելի բանաւոր քան զարդիս, միշտ գարնանամուտէն կ՚ըսկսէին նոր տարին : Իսկ ետքերը երևելի դէպեր պատահեցան այլ և այլ ազգաց մէջ որոց յիշատակը պահելու համար նոյն դէպերէն սկսեալ թըւական դնել ուզվեցաւ, և ասանկով երևան եկան շատ մը քաղաքական թըւականներ ու տարեգլուխներ զորոնք երկար կ՚ըլլայ հոս մի առ մի թըւել ու բացատրել. Հասնինք երևելագոյնին :

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԸՒԱԿԱՆ. — Դարերու պատմութեան մէջ մարդկային միտքը յափշտակօղ ամենամեծ եղելութիւնը Յիսուսի Քրիստոսի հրաշալի գալուստն ըլլալով, տարակոյս չը կար որ քրիստոնէ ժողովրդոց համար քան զայն երևելի եղելութիւն և քան զայն հաստատ թըւական չէր կրնար ըլլալ. ուստի արդէն քրիստոնեայ և հետըզհետէ քրիստոնէութիւնն ընդունօղ ժողովուրդք ընդունեցին զայս թըւականը, լքնելով ուրիշ թըւականաց գործածութիւնը :

Բայց գէշն ան էր որ տարին մի և նոյն օրը չէր սկսեր ոչ միայն այլ և այլ երկիրներու մէջ, այլ և մի և նոյն երկրի մէջ զանազան տարեգլուխներ կային, 1563 ին Կարոլոս Թ. հրովարտակով մը վերցուց Ֆռանսայէն միւս բոլոր տարեգլուխները և հրամեց որ Յունվարէն սկսած տարեգլուխն ընդունվի և այն գործածվի ընդհանրապէս. տանկ ընդհանրացաւ և մնաց մինչև այսօր այս սովորութիւնը:

Առաջին ակնարկով՝ միտում մը կայ կարծելու Թէ Քրիստոսի Թըւականին զուգընթաց բերելու համար է որ յունվարը տարեգլուխ ընդունված է, բայց ամենևին չ'է այնպէս. Թէ որ անանկ ըլլար՝ Քրիստոսի ծնունդէն կ'ըսկսէր տարին. և է յունվար տարեգլուխը ուրիշ հնագոյն և դիցաբանական Թըւականի մը տարեգլուխ, որոյ բացատրութիւնը անօգուտ չ'է հոս ի լուսաբանութիւն խնդրոյն:

Յունվար կամ յանվար բառը Լատինաց Յանոս կռապաշտ Թագաւորին անունէն եկած է, որում տաճար կանգնեց Հռոմուլոս Հռոմ քաղքին մէջ՝ չաստուածացնելով զանի յանուն խաղաղութեան չաստուածի, որոյ իշխանութիւնը ժամանակի և ամաց վրայ ալ տարածեալ ըլլալուն համար, երկու գլխով ծոծրակ ծոծրակի տուած կը նկարագրէին զանի, որոյ մէկ դէմն անցեալին կը նայէր, միւսն ապագային: Յանուն կամ ի յիշատակ Յանոսի՝ տարեգլուխը յունվարէն սկսելու սովորութիւնն անտ այսպէս սկսաւ ու մինչև մեր օրերը մնաց, որոյ յարգն ու կարևորութիւնը Յանոսի երկրպագուք միայն կարող են կշռել:

Ուստի յունվար տարեգլուխը ծուռ է աստղաբաշխօրէն, վասն զի ձմեռան 12 րդ օրը կ'ըսկըսի փոխանակ սկիզբէն սկսելու, և յունվար բառն անբանական ու անտեղի, ուստի և ըստ մեզ անընդունելի: Թող Լատինք պաշտեն կամ չըպաշտեն իրենց չաստուածը, անմոռաց պահեն Թող անոր յիշատակը. իրենց գիտնալու բանն է. Յոյնք հետևին Թող Լատինաց. ատ ալ Յունաց գիտնալու բանն է, իսկ Հայոց ինչ. ինչ հարկ կայ Հայոց՝ Լատինաց կամ Յունաց քղանցը բռնել ու անոնց հետևիլ. չունին արդեօք իրենց տարեգլուխը: Բաց աստի՝ Յունվար տարեգլուխը Թէ Յունացն ըլլայ և Թէ Լատինաց, ուրիշ

մեծ անտեղութիւն մ'ալ ունի, այն է ամսագլխոց խախտումը :

2. **Ամսագլուխք**. — Ամիս ըսելով՝ աստեղատան մը մէջ արեւին անցուցած միջոցը պիտի իմանանք, և 12 աստեղատանց միջոցները 12 ամիս պիտի կազմեն : Արդ՝ յունվարի մէկը ինչ նըշանակութիւն ունի աստղագէտի մը կամ քիչ շատ խորհող անձի մը համար, թէ իբրև տարեգլուխ Քրիստոսի Թըւականին և թէ իբրև ամսագլուխ : Իբրև տարեգլուխ՝ պիտի յիշէ Քրիստոսի ծնունդը որ չ'է իսկ կատարըւած նոյն օրը, այլ ըստ ոմանց առաջ և ըստ ոմանց ետքը կատարըւած է, միանգամայն պիտի յիշէ Յանոս չաստուածը զորոյ անունը կը կրէ այս ամիսը : Իբրև ամսագլուխ՝ արեւն իր շրջանին մէջ աստեղատան մը մէջ մտնելու առաջին օրը պիտի նշանակէր, մինչդեռ ըստ Լատինաց 20 օր կայ որ մտած է և ըստ Յունաց 8 օր : Սոյնպէս խախտած են միւս ամէն ամսագլուխներն ալ իրենց աստեղատունէն և շփոթութեան մէջ ընկած : Ուստի ամսագլուխ ալ չ'է յունվարի մէկը և ոչ ալ տարեգլուխ, վասնզի եղանակի մը սկիզբը չ'է . և ինչ խառնակութիւն բառից և իմաստից, և ինչ այպանելի շփոթութիւն յիշատակաց և իրողութեանց :

Քրիստոսի Թըւականը աստեղական դրութեամբ քաղաքական տարւոյն հետ համաձայնելու համար, պէտք էր գոնէ դեկտեմբերի $^{9}/_{21}$ ին դնել որ եղանակի մը սկիզբն է և ձմռան արեւադարձը յորում արեգակը կը մտնէ յԱյծեղջիւր կենդանակերպը, և ասով ամսագլուխները գրեթէ ճիշտ կը պատասխանէին կենդանակերպ աստեղատանց :

3. **Անուանք ամսոց**. — Յունվարին ինչ նշանակութիւն ունենալը ըսինք : Փետրվար (**Février**) տենդի ամիս ըսել է . ասանկ կոչուած են Հռոմայիք՝ այս ամսոյն մէջ իրենց մայրքաղքին շըրջակայից մէջ յաճախ տենդ պատահելուն համար : Եթէ ախտերու ալ ամիս նուիրելու հարկ կար, ինչու նիլախտին (peste) ու հնտախտին ալ (քօլէռա) մէյմէկ ամիս չը յատկացվի : **Մարտ**՝ **Mars**, այսինքն Արէս՝ պատերազմի չաստուածին անունէն : **Ապրիլ**՝ **Ափրոդիտա** յոյն բառէն ի յիշատակ հեշտութեան չաստուածուհւոյն : **Մայիս**՝ **Մայիա** դիցուհւոյն անունէն, որ էր Արա-

մազդայ հոմանոյշը. Յունիսը՝ Յունիոս յատուկ անունէն. Յուլիսը՝ Յուլիոս կեսարին անունէն. Օգոստոսը՝ ի յիշատակ Օգոստոս կայսեր: Սեպտեմբեր՝ լատիներէն եօթներորդ ամիս ըսել է, (վասն զի հիներն ի սկզբանէ անտի Մարտէն կ՚սկսէին տարին այսինքն գարնան սկիզբէն) բայց հիմա Հռոմացւոց տարւոյն իններորդ ամիսը կ՚ըլլայ: Հոկտեմբեր՝ ութերորդ ամիս ըսել է, որ հիմա տասներորդ է: Նոյեմբեր եւ Դեկտեմբեր՝ իններորդ և տասներորդ ըսել են, որ հիմա մետասներորդ և երկոտասներորդ են: Ասի նաև անժխտելի ապացոյց է որ Հռոմացիք ալ ի սկզբան Թըւական անուններ կու տային ամսոց, ինչպէս հիները նախնական դարերու մէջ ըստ Աստուածաշընչին որ կ՚ըսէ. «Եւ յառաջնումասուր ամսեանն առաջնոյ երաց Նոյ ըզվերնայարկն տապանին (1)·» Երանի թէ այս սովորութիւնը շարունակած ըլլար և ամսոց այս թըւական անունները պահված ըլլային:

(1) Առաջին ամիս ըստ աստուածաշընչին Նիսանն է Հրէից որոյ առաջին օրը կը պատասխանէ մեր Հայկազանց Արեգ ամսոյ եւ մեր Բնական Զարթին ամսոյ մէկին:

Բոլոր այս թերութեանց մէջէն ելնելու և տօմարին կատարեալ ճշտութիւն ու պարզութիւն տալու համար, փափաքելի էր սա հետևեալ բնական կերպով սկսել ու յառաջ վարել տարւոյն ընթացքը:

ԲՆԱԿԱՆ ՏԱՐԻ ԵՒ ԱՄՍԱՄՈՒՏՔ. — Գարնային հաւասարակածի կէտը՝ որ է արեւին աջահակ վերելքին գրօն, պէտք էր տարւոյն առաջին օրը սեպել և անկէ համրել տարին, որ արդէն քրիստոնէութեան հաստատման ժամանակին հետ առընչակից է զատկական լուսնին պատճառով, որոյ լրումը Գարնամուտէն ետքը կը պատահի. զի քրիստոնէութեան հաստատութիւնը՝ քարոզութեամբ Աւետարանին ի ձեռն առաքելոց՝ Քրիստոսի Յարութեան օրէն սկսեալ համարելի է քան թէ անոր Ծննդեան օրէն. ասով՝ շնորհական թըւականին ալ տարեմուտը կրնար սեպվիլ բնական տարեմուտը, իրարու ըստ կարի մերձեցեալ ու համաձայնեալ գտվելով, բընութեան ու շնորհաց այս երկու ուրախառիթ յիշատակները՝ Գարուն ու Զատիկ յիրար զուգեալ, և միանգամայն համաձայն ըստ ամենայնի Աստուածա-

շունչ պատուիրանին որ կ՚ըսէ. «Ամիս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջինն եղիցի յամիսս տարւոյ [1]:»

Եթէ ասոր արգելք նկատվեցաւ ժամանակագրութեանց մէջ ծագելիք շփոթութիւնը որ Քրիստոսի այժմեան Թըւականէն 33 տարի վար երթալու պարտաւորելով տի պատահէր, գուցէ կարելի էր ուրիշ տեսութեամբ մը. զոր օրինակ՝ Թըւականը փոխանակ Քրիստոսի Ծնունդէն առնելու՝ անոր մարդեղութեան խորհուրդէն առնվէր, որոյ տնօրէնութիւնը Տիրամայր կուսին յղացմամբը կ՚ըսկսի, այսինքն Աւետման տօնէն որ ամէն ազգաց մէջ գարնան առաջին ամսոյն մէջ կը պատահի եւ ըստ Լատինաց գարնանամուտին խիստ մօտ օր մը, գարնան 5դ օրը: Այս տեսութեամբ միայն հաւանելի կը Թըւի որ շնորհական և բնական տարեմուտք կրնային դիւրաւ միանալ: Հոս տարբերութիւնը ինն ամիս

(1) Ասի արեգակնային այն ամիսն է որոյ մէջ կը լրանայ զատկական լուսինը. որովհետեւ գարնանամուտէն անմիջապէս ետքը լրացող լուսինն է զատկական լուսինը, ուստի գարնան առաջին ամիսն է աստուածաշընչին յիշած ամիսը որ տարեգլուխ պիտի բռնվի:

միայն կ՚ըլլար այժմեան Թըւականէն, Թէպէտ պզտիկ առջինին նկատմամբ՝ բայց ըստ որում տարբերութիւն բազմամսեայ՝ գուցէ անընդունելի Թըւէր շատերուն: Եթէ ասոնց ո՛չ մէկը և ո՛չ միւսը կրցաւ ըլլալ դժբաղդաբար, գոնէ ձմռային արևադարձի կէտը պէտք էր բռնել իբրև աստեղական տարեմուտ քաղաքական Թըւականին որ Քրիստոսի ծնընդեան օրերուն ամենամօտ աստեղական կէտն է. ասով ալ դարձեալ քաղաքական տարին աստեղական տարւոյն հետ համաձայնեալ կը գտնվէր, և տարւոյն եղանակներն ըստ կարի ճիշտ կը պատասխանէին աստղաբաշխական եղանակաց. Գարունն ու Աշունը երկու հաւասարակածի գրօներէն կ՚ըսկսէին, Ամառն ու Ձմեռը երկու արեւադարձի կէտերէն. և ամսագլուխները չէին խախտեր իրենց աստեղական կէտերէն:

Ամիսներուն փոխանակ կռապաշտական ու բռնապետական անտեղի և անմիտ, և մասնաւոր անձի, ազգի ու երկրի վերաբերեալ անուններ տալու՝ որոնք դիւրաւ կ՚անհետանան, պարզութեան ու ճշտութեան համար՝ իրենց Թըւական անունները պէտք էր տալ,

որք ի բնէ ճշմարիտ և անայլայլ՝ աշխարհիս ամէն կողմի միօրինակ կը յարմարին, զօրօրինակ Նախամիս, Երկամիս, և այլն, և ամէն ազգ կրնայ իր լեզուովը թարգմանել, զօրօրինակ արաբերէն՝ շէհրը էվվէլ, շէհրը սանի, շէհրը սալիս, և այլն, եթէ երբէք Արաբք արեգակնային ամիս գործածելու հարկ տեսնեն քաղաքական գործողութեանց մէջ: Նոյնպէս և Ֆռանկը կրնայ շարունակել իր Նօվամպր, Տէսամպր բառերը՝ Էնտէսամպր, Տօտէսամպր աւելցնելով, և միւսները սոյն գրութեամբ փոփոխելով լրացնել իր 12 ամսոց թըւական անունները:

Նախամսոյ մէկը ճիշտ Գարնամուտէն սկսելով, այսինքն Լատինաց մարտի 21 էն, տարւոյն բոլոր ամիսներն ալ գրեթէ ճիշտ կը պատասխանեն կենդանակերպից այսինքն կենդանակամարի համաստեղութեանց կամ աստեղատանց, որոց մէջէն անցնելով կը կատարէ արևն իւր տարեկան շրջանը:

Արեգակնային տարին բաղկացեալ ըլլալով 365 օրէ, 5 ժամէ, 48 րոպէէ և 51 մանրերկրորդէ, նահանջը 4 տարին մէյմը և 4 դարագլուխ մէյմը պէտք է որ ըլլայ ըստ Գրիգորեան տօմարին որպէս զի արևային շրջանին կոտորակ'երը ոչ աւելնան ոչ պակսին: Ասի ատանկ չըլլալուն համար է որ Յուլեան տօմարին տարին 12 օր ետ մնացած է աստղաբաշխական ճիշտ տարիէն, ամէն 4 տարի և ամէն դարագլուխ անխտրապէս նահանջ ընելով: Եթէ այս մեծ վրիպակին առջևը չ'առնի, այս 12 օրվան տարբերութիւնը երթալով կ'աւելնայ ու դարեր անցնելով՝ ամիս տարի կըկազմէ նոյն տօմարին մէջ:

Բայց Հայոց ինչ փոյթ այս անտեղութենէն. Յուլեան տօմարը Հայոց տօմար չ'է, այսօր զայս տօմարը գործածողք Ռուսերն ու Յոյներն են. Թող ատոնք մտածեն: Հայերն ունին իրենց ազգային տօմարը, մենք նայինք թէ ինչ բարեկարգութեան պէտք ունի այս տօմարը:

**Հայոց տօմար.** —Այսօր Հայոց թըւական ըսվածը որոյ ՌՅԻԱ տարւոյն մէջ ենք, չ'է այն Հայկազանց թըւականը զոր ունէին մեր Նախահարք ի Հայկայ կամ ի ջրհեղեղէն անտի. այլ զայս թըւականը Մովսէս Բ. Կաթողիկոսը հաստատեց Քրիստոսի թըւին 552 ին ի յիշատակ փոփոխութեանց

զորս ըրաւ Հայոց գործածած հին տոմարին վրայ, և Հայք այնուհետև այն Մովսիսեան տոմարով վարվիլ սկսան որ անյարմարապէս Հայոց թուական ըսվեցաւ փոխանակ Մովսիսեան ըսվելու: Բայց անշուշտ է որ Կաթողիկոսին ըրած փոփոխութիւնքը չէին արժեր դարագլուխ մը կազմելու որ Քրիստոսի թուականէն նախամեծար համարվէր: Ուստի կամ Հայկազանց հին թուականը լքնելու չ'էր, կամ Քրիստոսի թուականով վարվելու էր՝ Հայկազանց տոմարին ամսագլուխներն աւոր յարմարցնելով, և տարին Քաղոցի մէկէն սկսելով որ ձմռան արևադարձի և բնական ամսագլխի մը կը պատասխանէ որ է դեկտեմբերի $^{9}/_{24}$:

Հայկազանց ամիսներն ալ ունին իրենց թերութիւնները որով զուրկ կը մնան տիեզրական ըլլալու յարմարութենէն, զի բնութեան երևոյթներուն ամէնքը չեն պատասխաներ: Նախ՝ ամիսներու անուանց նշանակութիւնը ըստ մեծի մասին մեզի անծանօթ է, ասի թերևս տկար փաստ, բայց ծանօթ եղածներն ալ ամէնքն իրենց բնական տեղը չ'են, զորօրինակ Քաղոցը որ Հնձար կամ Կթօն բնական ամիսը տի նշանակէ, անտեղի է ձմռան մէջ ուր ոչ արտահունձ կայ ոչ այգեկութ. մէկ քանին միայն իրենց բնական տեղը կը թուին, ինչպէս Մարգացն ու Հրոտիցը, իսկ մնացածը՝ Արեգ ու Նաւասարդէն զատ՝ յատուկ անուններ կը թուին:

Արեգ աստեղական անունը խիստ վայելուչ կը յարմարէր տարւոյն առաջին ամսոյն, եթէ միւս ամիսներն ալ աստեղացմէ առնուին անուննին, կամ թէ՝ արեգակը այն ամսոյն մէջ միայն երևէր երկիրս:

Երկրորդ անյարմարութիւնը՝ ամիսներու հաւասարապէս եռասնական օր բաժնված ըլլալն է, որ 5, 6 օր Աւելեաց կը թողու տարւոյն վերջը: Այս Աւելեացը իբր տասներեքերորդ ամիս մը ձևանալէն զատ՝ աստղաբաշխական այն անտեղութիւնն ալ ունի որ ամսագլուխները աստեղատանց կեսերէն զգալի կերպով կը խախտէ. մինչդեռ այս անտեղութիւնը կրնար վերնալ եթէ այն լրական օրերը միւս ամսոց վրայ համեմատական կարգով մը բաշխեալ ըլլային:

Հայկազանց թուականին այսօր մեզի

համար մէկ ուրիշ անտեղութիւնն ալ՝ տարին Նաւասարդէն սկսիլն է որ Մըրգարի 3 և Օգոստոսի 11 ին կու գայ, որ ո՛չ բնական տարեմուտ է և ո՛չ աստեղական ամսագլուխ: Բայց մեզի համար խիստ հաւանելի է որ նախնական դարերու մէջ մեր հայկազուն նախահարք՝ ինչպէս հին ժամանակաց ազգերը, Հրէայք, Պարսիկք և յետոյ Հռոմացիք, իրենց սրբազան տարին գարնամուտէն կ՚սկսէին, որ այսօր Արեգի մէկն է, ի յիշատակ արարչագործութեան և փրկութեան մարդկան ի ջրհեղեղէն ի ձեռն Նոյեան տապանին որ հանգեաւ Մասեաց լերին վրայ ուրկէ իջան տարածեցան մարդիկ ի դաշտն Արարատայ: Եթէ ուրիշ պատճառ մը չը կայ պատմութեամբ ցուցված, նահանջ չընելու սովորութիւնն է որ կ՚երևի թէ տարած ձգած է զՆաւասարդն Օգոստոսի մէջ: Նաւասարդի թէ անունը և թէ հանդէսները կը վկայեն թէ արարչագործութեան և ջրհեղեղի յիշատակը կը տօնէին նախնիք ի Հայաստան: Զանդիկ բառ է նաւ (նէվ կամ նէօվ) որ նոր ըսել է և սարդ ամ, զոր մեր նախնիք հայ ձայնով ամանոր թարգմանած են: Ամանորի հանդէսներու մէջ աղաւնի կը թռցնէին ի յիշատակ Նոյայ թռուցած աղաւնոյն, և ջրախաղութիւններ կ՚ըլլային, ջուր կը սրսկէին իրարու վրայ: Այս ազգային հին սովորութիւնը՝ որ Անահտայ տաճարին մէջ կը կատարվէր ի Բագրևանդ և զոր Գրիգոր Լուսաւորիչ փոխադրեց յեկեղեցի յանուն Յովհաննու Մկրտչի, կայ դեռ մինչև ցայսօր Հայ Եկեղեցեաց մէջ ի տօնի Վարդավառի կամ Այլակերպութեան Քրիստոսի: Ցանկալի է որ անմոռաց պահվի այս ազգային յիշատակը, այլ և ցանկալի է որ իր բընական տեղը դառնայ գայ և ամանորի ընտանեկան ուրախութիւնները Հայկազանց նախնի և բնական տարեմուտին օրը կատարվի, որ է գարնան սկիզբը, որպէս զի հասարակութիւնը խելամուտ ըլլայ անոր ծագմանն ու նշանակութեանը:

Այս յիշատակով է որ սիրելի է մեզի Հայկազանց թըւականը որ իր թերութիւններովն հանդերձ իր յարգն ու արժանիքն ունի. նախ՝ իր հնութեամբը, որ այսօր մեր գիտցածը 4363 տարի կը համրէ (և հաւանօրէն ի սկզբան

մինչեւ ի ստեղծումն աշխարհի կ'ելնէր), մանաւանդ այնպիսի հնութեամբ որ փոխանակ դիցաբանական եղելութեան մը վրայ հիմնեալ ըլլալու, բնական դէպի մը կամ աստղաբաշխական կէտի մը վրայ հիմնեալ է, այն է՛ իր բնական տարեմուտը որ ջրհեղեղէն սկսեալ զարարչագործութիւնը կը յիշատակէ. երկրորդ՝ այն գեղեցիկ գաղափարովը զոր ունեցեր են մեր Հայկազուն նախահարք ամիսներու անունները բնութեան երեւութից յարմարցնելու :

Չը պարծի թող Յունաստ այս գաղափարին համար իր աստղագէտներովը որք դեռ երէկ՝ այսինքն 70 տարւոյ չափ առաջ ամսոց բնական կամ մշակական անուններ տալ մտածեցին. մանաւանդ հիանայ թող որ անդրանկագոյն ազգ մը կայ հին որոյ ծերութիւնն ալեւորեալ է թշուառութեան մէջ, այլ որ այս մասին կանխած է զանի 44 դարով եւ յղացած ու ծնուցած է զայդ գաղափարը որ նոր կը թըւի այսօր աչացն Եւրոպայ: Այն ֆռանսացի գիտնոց կաճառէն արեւելագիտաց ոմանց անծանօթ չ'էին գուցէ Հայկազանց թըւականն ու ամիսները, եւ հաւանօրէն առնցմէ առած

են այդ գաղափարը. իսկ եթէ յինքենէ ալ խորհած ըլլան, պէտք է գիտնան որ իրենցմէ խիստ շատ առաջ խորհօղներ եղած են : Անձիւր հայրենասէր ուսումնականի պարտաւորութիւնն է նախանձախնդիր հանդիսանալ այս հայրենի գաղափարին եւ չը լքնել զանի երբէք օտարին, այլ մանաւանդ բարեկարգել, բարգաւաճել զանի եւ տիեզրական ըլլալու արժանաւոր կատարելութիւններ տալ անոր :

Ցատուց ի վեր եւ մանաւանդ այս ետքի օրերս փափաք մը կայ ազգին մէջ Յուլեան տոմարը Գրիգորեանին հետ միացնելու, կամ աւելի ճիշտ ըսենք՝ մեր մուրացիկ գործած ամսոց օրերը Լատինաց ամսոց օրերուն հետ միացնելու : Ասոր համար յատուկ ժողովներ ու գումարումներ պահանջելու խորհուրդներ եղած են, եւ հասարակութիւնը իրաւամբ հետաքրքիր է իմանալու թէ ինչո՞ւ 12 օրի տարբերութիւն կայ մէջերնիս, եւ իղձ կը յայտնէ թէ ո՛ր կողմի հաշիւն որ շիտակ է անոր հետեւելու ենք :

Օրինաւոր է այս իղձը, եւ քանի որ խնդիրը կրօնական չ'է, կամ թէ՝ եթէ

կրնայ ունենալ կրօնական մաս եկեղեցական տօնից նկատմամբ, զանի իր առջի վիճակին մէջ թողլով՝ իբրև եկեղեցական ժողովոց ձեռնհասութեան միայն վերաբերելի, անոր սոսկ գիտնական կամ աստղաբաշխական մասը ամէն ուսումնասիրաց հեղինակութեանը կը վերաբերի, և այս մասն է միայն մեր ալ քննածն ու քննելիքը :

Սա պէտք է ըսենք նախ՝ և միշտ աստղաբաշխօրէն խօսելով՝ թէ Հայերուն այսօր գործածած տօմարը՝ այսինքն ժամանակաց հաշիւը՝ ազգային տօմար չ՚է, այլ Հռոմայեցւոց Յուլեան ըսված հին տօմարն է, զորոյ աստղաբաշխական հաշւոց սխալները Եւրոպացիք ճանչելով՝ զանի լքած են, և անոր տեղ սրբագրեալ նոր տօմար մը կը գործածեն այսօր՝ ըզ Գրիգորեան տօմարը : Եւ այս երկուքին մէջ եղած 12 օրի տարբերութիւնը նահանջ տարւոյ հաշիւներէն միայն ծագած է և որոնք Գրիգորեանին մէջ ուղիղ են : Գրիգորեան տօմարին հետ միանալու համար ազգայնոց յայտնած իղձը՝ սոյն ուղղութիւնն ընդունելու փափաքն է միայն և ոչ այլ ինչ :

Զայս ուղղութիւնը նոյն տօմարէն առնելու համար ինչ պէտք ունինք ժողովներու և վիճաբանութեանց, միթէ Եւրոպացի արդի քաջագէտ աստղաբաշխից այսքան անգամ փորձարկեալ հաշիւները կրկին մենք ալ տի փորձենք, և դարձեալ՝ ի շնորհս ուղիղ կէտի մը՝ երկուք ալ սխալ կէտեր առնելու ինչ պարտաւորութիւն կայ : Այդ չ՚է մեր կարծիքը, Գրիգորեան տօմարին հետեւիլ չ՚է կուրօրէն. այլ մեր իղձը ազգային տօմար մ՚ունենալ է որ արեւմըտեան տօմարին թերութիւններէն այնչափ հեռանայ և դէպ ի յուղղութիւն և ի բանաւորութիւն այնչափ մերձենայ որ արեւմտեանք ցանկան օր մը իրենց տօմարը մերինին համաձայնել և մեր բնական տարբեչափութեանը հետեւիլ, երբոր սովորութեան գերութենէն ու նախապաշարմանց լուծէն զերծեալ՝ բանաւորութիւն բնտռելու ելնին այս մասին :

Ասի այսօր չ՚է նէ, օր մը պիտի ըլլայ : Օրինակ մեզի՝ Ֆռանսացւոց հնարած մեղրական դրութիւնը, որ հետըզհետէ ընդունվելու վրայ է միւս ազգերէ, և տարակոյս չը կայ որ օր մը տի-

եզրական պիտի ըլլայ. և սա՝ ոչ թէ այն ազգին աշխարհվարական ազդեցութեան շնորհիւը այլ շնորհիւ բանաւորութեան զօրոյ կնիքը կը կրէ այն գրութիւնը :

Մենք մեր ազգային տօմարին տարեբաշխական բարեկարգութիւնքը՝ Հայկազանց տօմարին նախնական ոգւոյն հետևելով և զանի Քրիստոսի թըւականին համաձայնելով՝ ներկայ տարեցոյցիս մէջ ամփոփել փորձեցինք, զոր փոխանակ Հայկազեան անուանելու Բնական տարեցոյց անուանեցինք, զի ընդհանրապէս ամէն ազգաց և ամէն երկրի մէջ գործածվելու յարմար և ընդունակ կը կարծենք :

## ԲՆԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

Մինչև հոս ընդհանուր կերպով ըսվածներէն կրնայ գուշակվիլ այս տարեցոյցին ոգին ու ընթացքը. բայց ի խելամտութիւն հասարակութեան անօգուտ չենք համարիր անոր գործածական քանի մը մասնաւորութեանց որոշ բացատրութիւնը :

Յայտնի է որ քրիստոնեայ ժողովըրդոց համար՝ Քրիստոսի թըւականին առջև պիտի խաւարէին անկէ առաջ գործածված մանր ու մունր մասնաւոր թըւականները, բաց ի բնական և տիեզրական այն թըւականէն որ աշխարհիս ստեղծմանէն կ՚ըսկսէր, որ միշտ կը տիրէ հին պատմութեան մէջ, ինչպէս Քրիստոսինը կը տիրէ նոր պատմութեան մէջ : Նախնի Հայկազանց թըւականն ալ կը փոքրկանայ թէպէտ՝ իբրև մասնաւոր թըւական՝ տիեզրական թըւականին առջև, իսկ իր բնական ճիշտ տարեմուտովը կը համաձայնի անոր, երկուքն ալ գարնամուտէն սկսելով, և մեզի համար համապատիւ է մեր ազգային պատմութեան և յիշատակարանաց մէջ : Բայց ընդհանուր կերպով չենք կրնար վերադասել ազգային թըւականը Քրիստոսի թըւականին որ ըզնոր աշխարհը հինէն անջրպետած է ըստ ամենայնի՝ մարդկային ընկերութեան դէմքն այլակերպելով. ուստի պէտք էր այս թըւականները աստեղական դրութեամբ իրարու համաձայնել՝ ամսագլխոց միաւորութեամբը :

Զայս ըրինք՝ բնական տարեմուտը իր տեղը պահելով, այսինքն Գարնամուտին, և Քրիստոսի թըւականին

տարեմուտը՝ իբրեւ շնորհական եւ միանգամայն քաղաքական տարեմուտ աստեղական ամսոց՝ Ծննդեան տօնին ամենամերձ գտուած աստեղական որոշ կէտին կապեցինք այսինքն ձմռամուտին(1) որ Լատինաց Ծնունդէն չորս օր առաջ է: Այս տարեմուտով շնորհական տարւոյն ամիսները կատարելապէս կը միաւորին բնական կամ աստղաբաշխական ամսագլխոց, եւ ասով բնական ամիսները Քրիստոսի Թըւականին մէջ անշփոթ կերպով կրնան գործածվիլ առանց բնաւին խոչընդոտի. մանաւանդ եթէ սկիզբները ընդհանուր դիւրութեան կամ օտարաց ու անվարժից դիւրըմբռնելի ընելու համար, Լատինաց կամ Յունաց ամսոյն ալ միանգամայն յիշվի թըւաբերութեան մէջ, զորօրինակ սապէս՝ 1870 Ձիւների 1 եւ Դեկտեմբերի 9:

Ասով՝ Լատինացմէ 11 օր առաջ ըսկըսած կ՚ըլլանք տարին, ինչպէս Լատինք 12 օր առաջ կ՚ըսկսին Յունացմէ: Ասի գուցէ նոր շփոթութեան առիթ մը թըւի ոմանց՝ խորհելով թէ՝ երկու անհամաձայն թըւականաց քով երրորդ մ՚ալ աւելցաւ. իրաւ այնպէս կ՚ըլլար եթէ անոնց գործածած միեւնոյն բառերը մենք ալ գործածէինք, և օրինակի համար՝ երկու յունվարներու քով երրորդ յունվար մ՚ալ հանէինք, իրարմէ 12ական օր տարբերութեամբ. իսկ մենք չը պիտի ըսենք Յունվարի 1, 12, 24, հապա յունվարներուն մէկը կամ միւսը պիտի դնենք մեր բնական ամսոյն հետ ինչպէս վաղուց անտի կ՚ընենք մեր Ցայսմաւուրաց մէջ, զորօրինակ Արեգի 1 և Մարտի 9: Եւ եթէ ուզվի աւելի ճշդել թէ որ մարտն է, դժարին չ՚է Յ. կամ Լ. գլխագիրն աւելցնել Յունաց կամ Լատինաց նշանակելու համար:

Բնական ամիսները ամէն տօմարի մէջ և ամէն թըւաբերութեան հետ կրնան վարվիլ. բաւական է որ տարեմուտը չորս եղանակներէն մէկուն սկիզբէն սկսած ըլլայ կամ գոնէ աստղաբաշխական ամսագլխոց մէկէն, բայց բնական տարեմուտը՝ այսինք Գարնամուտը ամսոյն գլխէն չը խախտելով. ինչպէս ամ-

(1) Ձիւների մէկը Ս. Աստուածածնայ Յղութեան տօնին պատահելով, որ քրիստոնէութեան տօնից առաջինն է, այս օրը միանգամայն եկեղեցական կամ տօնական տարեմուտ ալ գուցէ կրնայ սեպվիլ, եթէ երբէք կղերը աստուածաբանական պատճառ մը չ՚ունի ուրիշ կերպ մտածելու:

աշխարհի և Հայկազանց Թըւականին հետ որք Գարնամուտէն կ'ըսկսին :

Ամսոց Թըւական անունները ամենէն աւելի բնական եւ բանաւոր անուններն են որ հողագնտին ամէն կողմի համար կիրառելի և ընդունելի ըլլալու յարմարութիւն ունին: Առաջին մարդիկ ալ ի սկզբանէ այսպէս կը գործածէին, սըրբազան պատմութեան վկայութիւնը բաւական է . « Եւ յամսեանն եօթներորդում նստաւ տապանն ի լերինս Արարատայ » . « Յամսեանն առաջնում որ օր մի էր ամսոյն , նուազեաց ջուրն և եբաց Նոյ ըզձեղուն տապանին : »

Զրհեղեղէն ըզկնի , ազգաց ու լեզուաց բաժանմանէն ետքը սկսան մարդիկ այլ և այլ երկիրներու մէջ այլ և այլ մասնաւոր անուններ տալ ամսոց : Եղանակաց և բնութեան երևոյթից համեմատ, ամսոց մշակական անուններ տալու առաջին գաղափարը Հայկայ է որոյ սերունդը մինչև ցայսօր պահած է զանի Թերևս յանգէտս տարեաց , և որոյ համար խրատուք պարծելով հին հեղինակաց մէկը , անոր աստուածատուր ձրից մէկը սեպելով իր տոմարն ալ, կ'ըսէ համարձակապէս հայկազանց համար՝ Թէ Աստուծմէ առին « Ըզ տոմարն , անզ Մովսէս , սատ Հայկ յառաջ քան ըզնաս » : Անտարակոյս կըԹըւի Թէ մեր դիւցազն նախահայրը ոչ միայն ճարտար շարժիչ էր աղեղան , այլ և Թըւոց ու չափոց , և դիտող երկնային մարմնոց : Առաջինն եղաւ տարեցոյց տալու իր նորածին ազգին , սրբազան տարեմուտը՝ որ հաստատուն էր՝ գարնամուտէն սկսելով և Ամանոր տօնելով (ինչպէս որ Հրէայք ու Պարսիկք ալ կ'ընէին իրենց կրօնական կարգաց մէջ) : Իսկ Նաւասարդ տարեգլուխը քաղաքական էր և անհաստատ :

Զայս գեղեցիկ գիւտը՝ որ պատիւ կ'ընէ հեղինակին և արժանի ամենայն պարծանաց անոր ազգին , Հրէայք Մովսէսի կը վերագրեն և Հայք Հայկայ հնագոյն քան ըզ Մովսէս : Այս մասին աւելի ընդարձակ տեղեկութիւն խնդրողները՝ Հ . Ղեւոնդ Ալիշանայ Հոգեշնորհ վարդապետին սիրահիւս տողերը Թող կարդան Յուշիկք Հայրենեաց հատորներուն մէջ՝ « Հայկայ շրջան և Սկիզբն մարդկութեան ի Հայս » վերնագրով գլուխները :

Մեր գրած մշակական անուններն

ալ՝ հեռի կռապաշտական կամ բռնապետական յիշատակներէ՝ Հայկազանց տօմարին ոգւոյն և իմաստին հետևելով է. միայն աւելի ճիշտ ու համեմատ բերել ուզած ենք բնական երևութից՝ և բառերն աւելի ծանօթ, որոց նշանակութիւնն ինքնին իրենց արմատէն յայտնի է առանց իսկ մշակական յօղուածոց որ ամէն մէկուն քով դրած ենք ի պէտս ինչ հողագործին :

Այս մշակական անունները՝ Թէպէտ ամէն երկրի չեն կրնար յարմարիլ՝ բընութեան երևոյթները երկրիս ամէն կողմ միօրինակ չը պատահելով, բայց բարեխառն գօտիներու տակ գտնուող երկիրներու համար՝ ուր ենքս՝ խիստ յարմար են : Ուստի Թըւական և մշակական անունները իրարմէ չը զատելով՝ մէկը միւսին իբրև բացայայտիչ՝ երկուքը մէկէն դրինք մեր տարեցոյցին մէջ որք միօրինակ ու անտարբեր կրնան գործածուիլ մէկը միւսին տեղ :

Հին անուանց նկատմամբ՝ պզտի բարեմասնութիւն մ'ալ աւելցնել կարծեցինք նորերուն վրայ՝ իւրաքանչիւր եղանակին ամսոց յատուկ յանգ մը տալով, ըստ կարի նմանաձայն եղանակին անուան, որպէս զի մշակը՝ Թէ և իմաստին ալ ուշադիր չ'ըլլայ, կարենայ յանգէն իմանալ Թէ այս ինչ ամիսը ո՞ր եղանակին մէջն է : Զորօրինակ Ամառ՝ իր ամիսները Հնձար, Տօթար, Մրգար (կրճատմամբ իբր Հնձարար, Տօթարար, Մրգարար). Ձմեռ՝ իր ամիսները Ձիւներ, Սառներ, Մրրկեր (իբր Ձիւնաբեր, Սառնաբեր, Մրրկաբեր): Գարուն և Աշուն նմանայանգ ըլլալով, անոնց ամիսներն իրարու չը շփոթելու համար պէտք էր երկաքանչիւրին ամսոց խումբն ալ եղանակէն այլայանգ ձայնով յօրջորջել: Զարթին, Ծաղկին, Մարգին (իբր Զարթային, Ծաղկային, Մարգային) Գարնան յատկացեալ. Կթօն, Թառմօն, Միգօն՝ Աշնան յատկացեալ:

Հիներուն վրայ երկրորդ բարեմասնութիւն մ'ալ զոր խիստ փոքրիկ համարելու չ'է, աւելեաց օրերուն հաւասարապէս բաշխումն է 12 ամսոց վրայ: Այս բաշխումը այնպէս մ'ընել ուզած ենք որ՝ Թէ ամսագլուխները չը հեռանան կենդանակերպ աստեղատանց կետերէն, և Թէ մշակը իսկոյն իմանայ անոր Թըւական անունէն Թէ այս ինչ ամիսը քանի օր կրնայ ունենալ :

Աւասիկ այս ամենապարզ դրութիւնը. «Այն ամիսն որոյ անունը անզոյգ թուով կ՚ըսկսի, անզոյգ թուով կ՚աւարտի այսինքն ունի 31 օր. այն ամիսն որոյ անունը զոյգ թուով կ՚ըսկսի, զոյգ թուով կ՚աւարտի և ունի 30 օր, բաց ի երկտասնամսէն որ հասարակ տարւոյ մէջ 29 օր ունի, իսկ նահանջ տարւոյ մէջ կը լրանայ և կ՚ունենայ ճիշտ 30 օր: Ինչպէս Նախամիս, Եռամիս, Հնգամիս, և այլն, ունին 31 ական օր. և Երկամիս, Քառամիս, Վեցամիս, և այլն, ունին 30 ական օր:

Ահա բնական տարեցոյցին կարգադրութեան բոլոր պատճառներն ու բացատրութիւնքը որոնց վրայ կը հրաւիրենք ճշմարիտ բանասիրաց ուշը:

Մենք այս կարգադրութիւնը ոչ թէ իբր քմածին նորաձեւութիւն մը կը ներկայացնենք մերազնեայ հասարակութեան, այլ իբր օգտակար բարեկարգութիւն հիմնեալ ի վերայ բնական գիտութեան և բանաւորութեան, նպատակաւ ազգային ուղիղ տոմար մ՚ունենալու որ ցանկալի ըլլայ ամէն այլազգեաց: Չենք կրնար չը խոստովանիլ թէ տարր ազգովին ընդունելութիւնը իղձ մըն է զոր շատուց ի վեր կը տածենք. չենք կրնար ըսել թէ անտարբեր աչօք կը տեսնենք մենք մեր ազգին օտար տոմարներու մէջ մուրացիկ թափառիլը, օտարոտի կոչ և ձայնից հետեւիլը, ազգ մը մանաւանդ որ ըզ տոմարն իւր հնարած և ըզգրնական տարեչափութիւնն իւր հաստատած է զառաջինն: Բայց ասով հանդերձ՝ ամէն տեսակ նորոգութեան մէջ ժամանակին կից նախապաշարմունքն ու այլ և այլ դժարութիւնքն ալ անծանօթ չ՚են մեզի. և եթէ այսօր ազգը չ՚ընդունի զայս կարգադրութիւնը, հոգ չ՚է. իւրաքանչիւր անհատ կրնայ ընդունիլ զանի և իր առանձին գործողութեանց մէջ ի կիր առնուլ, ազատ է: Իսկ եթէ ոչ ոք ընդունի, այն ալ շատ հոգ չ՚է, մեր բաղձանքը դարձեալ լըցված կը համարինք. քանզի մեր յոյսը մեր ժամանակի մարդոց ընդունելութեան վրայ չ՚է բոլորովին, այլ մեր յուսոյ և ըղձի մեծագոյն մասը ապագայ սերունդին վրայ է որ ժամանակակից կրքերէ ու նախապաշարումներէ ազատ՝ աւելի լուսաւոր և անկողմնակալ աչօք կը դատէ իր նախորդաց գործը: Մեր

զայս իղձը գոհացուցած է Կիւղէմպէրկ՚ ձայներնիս մեր յաջորդաց հասցնելու միջոցը երաշխաւորելով: Այս մեզի բաւական է:

Մեր ակնկալութիւնը ազգին մէջ արթնցած յառաջդիմութեան ոգւոյն վրայ է որ օր ըստ օրէ աւելի պիտի ծաւալի: Մեր խօսքը՝ թէ ներկայ և թէ յետագայ դարուց մէջ՝ այնպիսեաց է որք յամենայնի ուղղութեան, բարեկարգութեան և բանաւորութեան կուսակից կանգնիլ կ՚ախորժին՝ գռեհկին ծիծաղական երեւնալու անոտի վախն ընդոտնելով, քան թէ ծթռած նախապաշարմանց ու անիմաստ սովորութեանց տակ գերի՝ Յանոսի և Արէսի ծնրադիր մնալ. այնպիսեաց որք կը սիրեն բանական լուսոյ հետեւիլ յառաջադիմութեամբ քան անբանական դից երկրպագել յետսընկրկմամբ: Այս թիւը պիտի բազմանայ. մենք յառաջադիմութեան հաւատ ընծայողներէն ենք:

**Ռուսինեան**

2 Ծաղկին 1871.

### ԵՐԳ

# Ի ՀԱՅ ԱՄԱՆՈՐ

## Ի ՅԻՇԱՏԱԿ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՅ ԱՒՈՒՐ ԱՄՍԵԱՆՆ ԶԱՐԹԻՆ

ԵՂԱՆԱԿԵԱՑ

ՏԻԳՐԱՆ ԶՈՒՀԱՃԵԱՆ

Դարերու մէջէն
Գրլուխ համբարձած՝
Ձայնէ զուարթաղէմ
Ժամանակն հինցած.

Նորոգ պարծանաց
Ազգին Հայկազանց
Բերեմ ընծայ նոր
Զարթին **Ամանոր**:

Զարթնուն թող Հայեր
’Ի կեանս եւ ’ի սէր,
Զարթնուն թող սրտեր
’Ի լոյս ցնծաբեր:

Նոր մարմին առնունք,
Նոր զարդ զգենունք,
Բայց ամբողջ մնայ
Սիրտ ի մեզ Հայկայ:

**Գ. Ապտուլլահ**

# Ի ԶԱՐԹԻՆ

# ԱՄԱՆՈՐԱԲԵՐ

## ԵՐԳ

Սեւ մրրկաց մէջէն որ յուզէն զերկին
Վերջապէս արփւոյն շողք ի դուրս թափին .
Եւ անոնց ծոցէն՝ յուսափիւռ ժպտով
Մայր պատմութեանն լցուած վարդերով՝
Զամանորոյ դրունս բանալով երկրին
Ահա գայ Զարթին :

Եւ կապուտաներկ յայերս յերգ թեթեւ
Թռչնիկըն զուարթ լայնէ զհոլաթեւ .
Եւ հաշտ ծովերուն յասպարէզ անտառ
Կարօտ նաւաստին պարզէ զառագաստ .
Համեստ մանիշակն ի ծոց անդ ծմակին
Ողջունէ զԶարթին :

Բայց այնքան դարուց անգութ մրրկէն
Ո՞րբ Հայ արեւուն շողեր տի փայլեն .
Ո՞ր անոր աւերքն անհուն ու արիւնոտ
Նոր զարդ տի կապեն ծաղկանց ի նարօտ .
Ո՞ր հրեշտակի շուրթն աւետէ նըմին՝
«Եհաս քեզ Զարթին :

Ահա դարուց ամպք ցրւելով այրէս ,
Թշուառ Հայրենեաց գայ պատկերն ի տես .
Հոն՝ թօթափելով ըզ փոշի շիրմաց՝
Կանգնին դիւցազունք, հայլին յորս դիմաց .
Բայց արտումբ ի հո՞ղ կ՚իջնին վերըստին . . .
Զը կաս դու՝ Զարթին :

Արքանուէր մայրեաց յանլոյս լռութիւնս՝
Եւ կամ լըճերու ծաղկաւէտ յափունս
Սահին կոյս բոտուերք հողմոյ նման թեթեւ
Հծծելով անուն մ՚ի շունչ հեւ ի հեւ . . .
Նաւասարդքն Հայոց ա՞լ ծաղիկ չ՚ունին
Ո՛հ ո՛ւր ես՝ Զա՛րթին :

Ո՛հ եկո՛ւր այդ լոյս ու վարդ թեւերով
Ծածկէ՛ զանցեալոյն վէրս աղեխորով .
Թող աչքէդ ցանուած հոսանք լուսահրատ
Հանդերձեալ դարուց շողան ի ճակատ .
Թշուառ մօրն ի սփոփ թող մանկունք ժպտին,
Եկո՛ւր իմ Զարթին :

Տարւոյն դըրանց հետ բա՛ց ըղձւոյ դրունս .
Ժպտին աւերակք պճնեալ ի ծաղկունս :
Հոս ամեն տարի բաժակաց դղչիւն
Տայ մխիթարող զալըստեանդ ողջոյն .
Ա՜հ խառնէ՛ ՚նդ անցեալ փառս Նաւասարդին
Նոր յոյսերդ՝ Զա՛րթին :

**Թովմաս Թէրզեան**

1871 Զարթին 1

## ՓԱՌԱՏԵՆՉ ԱՆՈՒՐՋ

Մին եզվար հող ունենայի՝ դիւր ըլլար, դար կամ թէ ծործոր,
Վազուկ ջրով՝ թէ եւ բռչիկ՝ վըտակ ըլլար, ակ կամ հեղեղ.
Մէջը մին ծառ կը տընկէի՝ ծիրանի, ծոր կամ թէ խնձոր,
Մէջը մին հիւղ կը շինէի՝ աղիւս, եղեգ եւ կամ քաղեղ :

Ծառիս վերեւ մին սիրուն բոյն՝ բուրդէ, փետրէ կամ սիզահիւս,
Հանգիստ կուտար մին երգեցկի՝ ճահրեկ, ճնճղուկ կամ ծիծառնիկ.
Հիւղիս ներսեւ հետս ընկողնիկ՝ առկախ, օրրան կամ պրտուահիւս,
Հանգիստ կուտար մին մանկունւոյ՝ թուխ, կասկահեր կամ խարտեշիկ:

Մին եզվարէն եւել չ'ուզեմ. չափս ըլլան հետս քող լոյս եւ սէր.
Ամենազեղ կուսին զողտրիկ՝ որ սիրտս ու աչս յինէն զրաւէր,
«Կանգնի՛ն կաց դու հոս, կ'ըսէի, ահա ծընմու նոր աշալուրջ,
Որչափ հեռին տանէ զըստուերդ արեգն ընդ դաշտ յոր եւ է կոյս,
Նոյնչափ հեռին երթամ զըծել հորիզոնիս ծիր սիրալոյս.»
Տենչալին յոր չը հասնի ձեռք է մի այլ ինչ քան մին անուրջ... :

3 Մարտին 1860

Ռ.

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

### Առ Ընթերցողս

---

Տեղեկութիւն տարբերաճախական վերնագրով յօդուածին առաջին երեսին մէջ առաջին պարբերութեան ետեւէն՝ որ «ամեն ուրեք» բառերով կը լմըննայ, երկրորդ պարբերութիւն պիտի գայ հետեւեալը.

«Ժամանակի եւ տարածութեան անպարագրելի անհընին մէջ՝ մարդուս չափելիքը առանց պարագրելի կամ շօշափելի մէկ մասը մէկ կէտն է. ժամանակին մէջ՝ տարի, տարածութեան մէջ՝ տեղ:»

Նոյն երեսին վերջին տողին մէջ տեղը «մէջը անուանեալ չափով» բառերէն ետքը անմիջապէս պիտի գայ հետեւեալը. «որ երկրագնտիս միջօրէական շրջանակին մէկ քառորդին տասն միլիոներորդ մասն է՝ իբրեւ միութիւն տարածութեան չափին,» մնացածը շարունակելի է:

ԲՆԱԿԱՆ

# ՏԱՐԵՑՈՅՑ

# 1871

ԳԻՆ 1 ՂՐՈՒՇ

...ԼԻՍ
...րամեան

059
S-26

6816

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0032256